ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Նոյեմբերի 1-2-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

Մասնավոր ուշադրությամբ քննության առնվեց Սուրբ Էջմիածնի 1700-ամյակի տոնակատարությունների ծրագիրը: Ժողովի անդամները բարձր գնահատեցին Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի ատենապետությամբ գործող 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման հանձնախմբի գործունեությունը՝ թելադրելով ծրագրված հանդիսությունների ու միջոցառումների ժամանակացույցը ներկայացնել ԳՀԽ հաջորդ նիստին: Տոնակատարությունների շրջանակներում նախատեսված են ուխտագնացություններ, երիտասարդական և թեմական ներկայացուցչական հավաքներ, Ս. Էջմիածնին նվիրված գիտաժողովներ, հրատարակություններ և այլն:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննարկեց նաև եկեղեցական կյանքի վերակազմակերպմանը վերաբերող հարցեր: Խորհրդի անդամները Մայր Աթոռի առաքելության արդյունավետության բարձրացման համատեքստում կարևորեցին ընդլայնումն ու վերաշխուժացումը իրականացվող աշխատանքների՝ ծխական համայնքների կազմավորման, եկեղեցական նոր սերնդի պատրաստության, համայնքներում հայորդյաց տների համակարգի ստեղծման, եկեղեցական շինարարության, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ոլորտներում:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ լսեց նաև նիստին հրավիրված «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրեն պրն Վահան Տեր-Ղևոնդյանի զեկույցը, որում հանգամանալից ներկայացվեց հիմնադրամի գործունեությունը: Ժողովականները մեծապես գնահատելով կարևորեցին իրականացվող աշխատանքները և վերահաստատեցին հիմնադրամի հայրենաշեն առաքելությանը աջակցելու իրենց պատրաստակամությունը:

Ժողովում քննարկվեցին նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարչակազմակերպական կյանքին առնչվող խնդիրներ: Տեղեկացվեց նաև Նորին Սրբության նոյեմբերի 10-28-ը Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ կատարելիք հովվապետական այցի մասին:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները նիստի ավարտին կանխավ իրենց շնորհավորանքներն ու բարեմաղթանքները հղեցին Նորին Սրբությանը՝ գահակալության երրորդ տարեդարձի առիթով:

Նիստը փակվեց գոհաբանական աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ